ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ
ՔՈԼԵՋ, ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ,
КУЛЬТУРЫ И СПОРТА
ГЕГАРКУНИКСКИЙ РЕГИОНАЛЬНЫЙ
ГОСУДАРСТВЕННЫЙ КОЛЛЕДЖ, ГНКО
ДИРЕКТОР
REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT
GEGHARKUNIK REGIONAL
STATE COLLEGE, SNCO
DIRECTOR

1401, ք. Մարտունի, Շահումյան 12, Հեռ./Тел./Tel. 0.262.4.11.51, 0.262.4.38.15, Ֆաքս/Факс/Fax: (374262).4.11.51
1401, г. Мартуни, ул. Шаумян 12, T. Martuni, str. Shahumyan 12, E-mail: martunuqolej@mail.ru

N 267 ,,25,, 08 2026թ.

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարի տեղակալ
Արաքսիա Սվաջյանին

Համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 24.12.2020թ. թիվ 48-Ն հրամանով հաստատված գործող կարգի, տեղեկացնում ենք, որ ,,Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ,, ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ,,1041.02.4 - Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում,, մասնագիտության արտադրական ուսուցման վարպետի թափուր տեղի:

Թափուր տեղի մրցույթին կարող է մասնակցել այն անձը, ով համապատասխանում է տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներին:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է ըստ ՀՀ ԿԳՄՄՆ նախարարի 24.12.2020թ. թիվ 48-Ն հրամանով նախատեսված կարգի՝ մեկ փուլով, բանավոր՝ հարցազրույցի միջոցով:

Մրցույթին մասնակցելու համար անձը պատասխանատու աշխատակցին ներկայացնում է .

1. Դիմում /Ձև 1/,
2. Փաստաթուղթ կրթության մասին /դիպլոմ/,
3. Անձնագիրը և հանրային ծառայության համարանիշը,

4. Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք /առկայության դեպքում/,
5. Ինքնակենսագրություն /Ձև 4/,
6. Մեկ լուսանկար 3X4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքի վկայական,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ,
9. Հրապարակված հոդվածների ցանկը և գիտական աստիճանը, կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ 2026թ. օգոստոսի 25-ից մինչև 2026թ. սեպտեմբերի 7-ը ներառյալ, ամեն օր ժամը 10^{00}-ից մինչև 17^{00}-ն, բացի շաբաթ, կիրակի և օրենսդրությամբ սահմանված այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2026թ. սեպտեմբերի 10-ին ժամը 14^{00}-ին, ,,Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ,, ՊՈԱԿ-ում: Հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղաք Մարտունի, Շահումյան -12 :

Տեղեկությունների համար զանգահարել.

0262.4.11.51

0262.4.15.46

077.24.01.72

Հարգանքով,

Յու. Սուքիասյան